ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, պատարագեց հոգեշնորհ Տ. Հարութիւն վարդապետ Մատենչյանը։

❁❁❁

ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը բնաբան ունենալով «Վերինք ամենայն այսօր ցնծացէք ընդ մեծապայծառ փառսն Սեպուհոյ գերազանց լերինն»։

❁❁❁

ՀՈՒԼԻՍԻ 12-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ»։

Օշականում, Մեծ Ուսուցչի դամբարանի վրա կառուցված եկեղեցում, պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Նմանեալ Մովսիսի Տէր վարդապետ, բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ»։

Սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների և ուխտավորների խուռներամ բազմություն։

❁❁❁

ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Վեհափառ Հայրապետը Մոսկվայից մեկնեց Կիսլովոդսկ, մոտ մեկ ամիս հանգստանալու նպատակով։

Վեհափառ Հայրապետին ընկերակցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

❁❁❁

ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

❁❁❁

ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

❁❁❁

ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Վարդավառ, պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց Թաքվի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

❁❁❁

ՀՈՒԼԻՍԻ 30-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոցն»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը։